Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2007 թվականի ապրիլի 16 -ի
№170 որոշմամբ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## *Նախաբան*

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ասուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում, ջրային համակարգում և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝հանձնաժողով) 2006 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ

Նիկոլայ Գրիգորյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի անդամ

Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ

Մուշեղ Կոշեցյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով (89 աշխատող, այդ թվում՝ 57 քաղաքացիական ծառայող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  ա) սակագնային բաժին,
  բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
-լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
  բ) ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,

- սպառողների հետ կապերի բաժին,

- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

## *1. Կարգավորման իրավական դաշտի կատարելագործում*

2006 թվականին հանձնաժողովի որոշմամբ հաստատվել են էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման նոր կանոնները (ԷՄՕԿ) որոնցում հստակեցվել են էլեկտրական էներգիայի մատակարարման հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված` սպառողների և մատակարարի իրավունքներն ու պարտավորությունները:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներից է էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների մշակումը: 2006 թվականին մշակվել և հաստատվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգը», որով կարգավորվում են արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց սարքավորումների օպերատիվ ենթակայության խնդիրները և դրանց կարգավարման ընթացքում նրանց փոխհարաբերությունները: Մշակվել և հաստատվել է նաև «Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման միջոցների տեղադրման և շահագործման կարգը», որը կանոնակարգում է էլեկտրաէներգետիկական շուկայում գործող ընկերությունների փոխհարաբերությունները էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման համակարգում կիրառվող հաշվառման համալիրների տեղակայման և փոխարինման ընթացքում: Լրամշակվել են էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագրի օրնակելի ձևը և «Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգը»:

Ինքնավար արտադրողների համար գործունեության բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով 2006 թվականին լրամշակվել է վերականգնվող էներգառեսուրսներ օգտագործող ինքնավար արտադրողների միկրոէլեկտրակայանների և էլեկտրաէներգետիկական համակարգում զուգահեռ աշխատանքի կարգը: Կատարված փոփոխությունները հնարավորություն են տալիս կարգի գործողությունը տարածել նաև համակցված ցիկլով էլեկտրական և ջերմային էներգիա ինքնավար արտադրողների վրա:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների եւ էլեկտրաէներգետիկական համակարգի համատեղ աշխատանքի խրախուսման նպատակով հանձնաժողովը հաստատել է էլեկտրաէներգիայի առուվաճառքի (Մատակարար-Սպառող (միկրոէլեկտրակայան ունեցող ինքնավար արտադրող) պայմանագրի օրինակելի ձևը:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելուց հետո սպառող(կազմակերպություն)-մատակարար փոխհարաբերությունների ամբողջական կարգավորման նպատակով հանձնաժողովի կողմից հաստատվել է բազմաբնակարան շենքերում գործող բաժանորդի և կենցաղային սպառում ունեցող բաժանորդի բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (կազմակերպություն) պայմանագրի և բնական գազի մատակարարման (մատակարար-ոչ կենցաղային սպառում ունեցող բաժանորդ) պայմանագրի օրինակելի ձևերը:

Էներգետիկայի բնագավառում աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով 2006 թվականի ընթացքում հանձնաժողովն իրականացրել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի առուվաճառքի (ծառայությունների մատուցման) 97 պայմանագրերի փորձաքննություն և գրանցում:

Հանձնաժողովի կողմից 2006 թվականին մշակվել և հաստատվել են Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարձակալության տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված «Ժեներալ դեզ Օ» ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված վարձակալ ընկերությանը՝ «Երևան Ջուր» ՓԲԸ-ին, տրվող ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանները:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Խմելու ջրի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման սակագների ձևավորման, սահմանման և փոփոխման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ:

## *2.Լիցենզավորում*

Հանձնաժողովը 2006 թվականի ընթացքում ստացել է էներգետիկայի բնագավառում բարդ ընթացակարգով լիցենզավորման՝ 36 և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում պարզ ընթացակարգով լիցենզավորման՝ 29 հայտ: Քննարկումների արդյունքում էներգետիկայի բնագավառում տրվել են փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 22, բնական գազի փոխադրման ցանցի կառուցման՝ 1, հողմային էլեկտրակայանի կառուցման՝ 1, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 11 և էլեկտրական էներգիայի արտահանման՝ 1 լիցենզիաներ, իսկ

էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում՝ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 29 լիցենզիա:

Էներգետիկայի բնագավառում ստացվել են լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 16 հայտեր, լիցենզիաների վերաձևակերպման՝ 2, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն համաձայնություն տալու՝ 4, գույքն օտարելուն համաձայնություն տալու՝ 5, բաժնետոմսեր վաճառելուն համաձայնություն տալու՝ 4, փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար անհրաժեշտ հիմնական գույքի նկատմամբ իրավունքները փոխանցելուն համաձայնություն տալու՝ 1 դիմումներ, որոնք սահմանված կարգով քննարկվել և բավարարվել են: Ուժը կորցրած է ճանաչվել նախկինում տրված 1 լիցենզիա: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ստացվել են նախկինում տրված լիցենզիաներն ու թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու 115 դիմումներ, որոնք ևս բավարարվել են:

Հայտերի և դիմումների ուսումնասիրության արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ, բարդ ընթացակարգով տրված գործունեության լիցենզիաների համար մշակվել և հաստատվել են գործունեության պայմաններ:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների, 2006 թվականի ընթացքում հանձնաժողովը քննության է առել ջրային համակարգերի օգտագործման թույլտվություն տալու վերաբերյալ 5 ընկերությունների հայտեր, ինչպես նաև նախկինում տրված թույլտվությունների գործողությունների ժամկետները երկարաձգելու 3 հայտ: Մշակվել են ընկերություններին տրամադրվելիք ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների պայմանների նախագծերը, սահմանված կարգով իրականացվել են հասարակական ծանուցումներ, նախագծերի հանրային քննարկումներ, որից հետո միայն բոլոր ընկերություններին տրամադրվել են ջրային համակարգերի օգտագործման թույլտվություններ և հաստատվել գործունեության իրականացման պայմանները:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգի համաձայն՝ 13 լիցենզավորված անձանց կողմից լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պատճառով հանձնաժողովն ընդունել է որոշումներ որպես ֆինանսական տույժ շուրջ 29 միլիոն 214 հազար դրամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ:

2006 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից էներգետիկայի բնագավառում և ջրային համակարգում լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման, դրանց գործողությունների ժամկետների երկարաձգման, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում պարզ ընթացակարգով լիցենզիաների տրամադրման համար տուրքերի գանձման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել շուրջ 227 մլն 537 հազար դրամ պետական տուրք:

### *3. Սակագնային քաղաքականություն*

1. Էներգետիկայի բնագավառ.

Ռուսաստանի Դաշնությունից ներկրվող բնական գազի գնի բարձրացման հետ կապված՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացրած հայտերի հիման վրա հաշվետու տարվա սկզբին վերանայվել են գազամատակարարման համակարգի սակագները:

Հաշվի առնելով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից վաճառվող բնական գազի սակագների բարձրացումը, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական և «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունների ներկայացրած հայտերի հիման վրա վերանայվել են կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) սակագները:

Միաժամանակ, էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու և վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագնի աճը կանխելու նպատակով վերանայվել են «Որոտանի ՀԷԿՀ» փակ բաժնետիրական ընկերությունից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, որոնք ուժի մեջ են մտել 2006 թվականի հուլիսի 1 -ից:

Ի կատարումն բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների պահանջների՝ հանձնաժողովը ճշգրտել և համաձայնություն է տվել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած՝ բնակիչ-բաժանորդների կողմից գազամատակարարման համար մատակարարի բանկային հաշվին վճարման ենթակա կանխավճարի մեծությանը:

Լրամշակվել է բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների ներտնային գազասպառման համակարգերի նախագծման, շինհավաքակցման և կարգաբերման աշխատանքների կատարման ծախսերի հաշվարկման մեթոդիկան, որտեղ ներառվել է նաև ծխատար և օդատար ուղիների առաջնային զննման, մաքրման ու վերանորոգման աշխատանքների հետ կապված ծախսերի հաշվարկը:

2006 թվականի նոյեմբեր ամսին գազամատակարարման համակարգի սակագների վերանայման արդյունքում ամսական մինչև 10 հազ խորանարդ մետր բնական գազ սպառողներին վաճառվող յուրաքանչյուր խորանարդ մետր բնական գազի սակագինը նվազել է 6 դրամով, իսկ 10 հազար խորանարդ մետրից ավելի սպառողներինը՝ ավելացել 6.75 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջների, հանձնաժողովը մշակել եւ հաստատել է հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների

հաշվառման կարգը եւ համաձայնություն տվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից ներկայացված հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարի հաշվետվության ձևին:

Հաշվետու տարվա վերջին ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2007 թվականի անվանական կազմը եւ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

Մշակվել եւ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառմամբ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ձևը:

Էներգետիկայի բնագավառի սակագների սահմանման և վերանայման հաշվարկներում կիրառելու նպատակով կատարվել են այդ բնագավառի կարգավորվող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծություն-ներ, կազմվել են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2007 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները:

Հաստատվել են երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրական էներգիա արտադրող կայանների կողմից հանձնաժողովի համաձայնությանը ներկայացված 2007 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների չափաքանակները:

Վերլուծելով էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսատնտեսական արդյունքները, հաշվետու տարվա վերջին հանձնաժողովը վերանայել է արտադրող էլեկտրակայանների՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Երևանի ջերմաէլեկտրա-կենտրոն», «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ -ների և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ -ի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) ու էլեկտրաէներգետիկական համակարգին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ -ի էլեկտրական էներգիայի հաղորդման եւ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ -ի էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագները, որոնք կիրառության մեջ են մտել 2007 թվականի հունվարի 1 -ից:

Ներկայացված համապատասխան հայտերի հիման վրա վերանայվել է մեկ և սահմանվել 11 նորակառույց փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Փոքր հիդրոէլեկտրակայաններից և հողմաէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկներում ներառված դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի յուրաքանչյուր տարի իրականացվող ճշգրտման համաձայն՝ 2006 թվականի

ընթացքում վերանայվել են 9 փոքր հիդրոէլեկտրակայաններից և մեկ հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

2. Ջրային համակարգ.

2005 թվականի վերջին Երևանի «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության վարձակալության համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված ֆրանսիական «Ժեներալ Դեզ Օ» ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ վարձակալության պայմանագիր ստորագրելուց հետո ստեղծել է «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը: 2006 թվականին սահմանվել են նորաստեղծ ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները:

Լրամշակվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական հաշվետվությունների ձևերը:

3. Հեռահաղորդակցության համակարգ.

Համագործակցելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ, հանձնաժողովը մշակել և հաստատել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների սակագների սահմանման ու ճշգրտման համար ներկայացվող դախսումների փորմատը:

Հաշվետու տարվա ընթացքում ուսումնասիրվել է նաև «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների սակագների ճշգրտումների վերաբերյալ հայտը: Առաջարկվող սակագնային ճշգրտումների հիմնավորվածությունն ուսումնասիրելու նպատակով կազմակերպվել են քննարկումներ շահագրգիռ անձանց մասնակցությամբ, պահանջվել է ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն: Արդյունքում՝ հանձնաժողովը բավարար հիմնավորված չհամարելով սակագների առաջարկվող ճշգրտումը, համապատասխան որոշմամբ մերժել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի առաջարկությունը: Այնուհետև հանձնաժողովի և ընկերության միջև սկսվել է բանակցային փուլը, որի ընթացքում սակագների ընդունելի ճշգրտման վերաբերյալ դարձյալ համաձայնություն ձեռք չի բերվել, և «ԱրմենՏել» ՓԲԸ-ին տրամադրված թիվ 60 լիցենզիայի վերախմբագրված և լրացված տարբերակի 6.Բ.3 կետի համաձայն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից բացառիկության իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների գործող սակագները հանձնաժողովը սահմանել է որպես անցումային:

## *4. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն*

Էներգետիկայի բնագավառի, ջրային համակարգի ընկերությունների, ինչպես նաև «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների վերլուծությունը, որպես հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը, հիմք է հանդիսանում ինչպես առանձին ընկերությունների գործունեության, այնպես էլ բնագավառների ամբողջական արդյունքների գնահատման, առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանն ուղղված որոշումների ընդունման և օրենքով հանձնաժողովին վերապահված կարգավորման այլ մեխանիզմների կիրառման համար: Այն առանձնակի կարևորություն է ձեռք բերում սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի գնահատման վերաբերյալ հիմնավորված որոշումների ընդունման և լիցենզիայի պայմանների վերահսկման գործառույթների իրականացման համատեքստում:

Հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ջրային համակարգի, էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունները և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն ներկայացրել են եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է նրանց ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

2006 թվականի ընթացքում հանձնաժողովը մշակել և հաստատել է հեռահաղորդակցության ոլորտի ընկերության («ԱրմենՏել» ՓԲԸ) կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը, որը նպաստում է կարգավորվող ընկերության ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերում ենթահաշիվների համակարգի ներդրման փորձը, 2006 թվականին աշխատանքներ են տարվել նաև ջրային համակարգի ընկերություններում ենթահաշիվների համակարգ ներդնելու ուղղությամբ, որոնք իրենց շարունակական զարգացումը կունենան նաև 2007 թվականին:

Սակագնային մարժայում ներառվող շահագործման և պահպանման ծախսերը գնահատելու և վաճառվող էլեկտրաէներգիայի միջին մանրածախ սակագինը ճշգրտելու նպատակով հանձնաժողովի աշխատակիցները համապատասխան ուսումնասիրություններ են կատարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը շարունակաբար իր ինտերնետային կայքում (www.psrc.am) հրապարակում է կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

## *5.Կարգավորվող ընկերությունների գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն*

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների գնահատումն ու համապատասխան կարգավորվող ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանումն է:

Հիմք ընդունելով հանձնաժողովի հաստատած «Խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի չափանիշների սահմանման և այդ չափանիշների մոնիթորինգի կարգը», 2006 թվականի ապրիլին հանձնաժողովը հաստատել է խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների գրանցամատյանների օրինակելի ձևերն ու դրանց վարման կարգը եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերն ու դրանց ներկայացման կարգը:

2006 թվականի մայիսին հաստատվել են նաեւ բնական գազի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնող «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը:

Վերը նշված ոլորտների ընկերություններից ստացված տեղեկատվությունների հիման վրա ստեղծվել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվական բազաներ, որոնք յուրաքանչյուր եռամսյակ հրապարակվում են հանձնաժողովի կայքում:

Աշխատանքներ են տարվել «Նոր Ակունք» եւ «Երեւան Ջուր» ընկերությունների հրապարակած ջրամատակարարման գրաֆիկների եւ հանձնաժողովի սահմանած սպասարկման որակի նվազագույն պայմանների համապատասխանեցման ուղղությամբ:

Հանձնաժողովը հետեւողականորեն վերահսկում է լիցենզավորված անձանց կողմից իր իրավական ակտերի պահանջների կատարումը: Այդ նպատակով 2006 թվականին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ում ուսումնասիրվել է բնական գազի ներտնային համակարգերի սպասարկման գործընթացի համապատասխանությունը «Բնական գազի մատակարարման եւ օգտագործման կանոնների» պահանջներին, որի արդյունքում կատարվել են համապատասխան վերլուծություններ, կազմվել է հաշվետվություն եւ հրապարակվել հանձնաժողովի կայքում: Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրություններին ակտիվորեն մասնակցել են սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

### *6. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում եւ վերահսկում*

2006 թվականին հանձնաժողովի սահմանած կարգով շարունակվել են կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության եւ համաձայնեցման գործընթացները: Հանձնաժողովի որոշումներով համաձայնություն է տրվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների, ինչպես նաեւ «Ազատեկ ՀԷԿ» ՓԲԸ-ի «Ազատեկ», «Կապան Էնեռժի» ՓԲԸ-ի «Ողջի-2», «Ողջի-3», «Ջրվաշեն ՀԷԿ» ՍՊԸ-ի «Ջրվաշեն» փոքր հիդրոէլեկտրակայանների ներդրումային ծրագրերին: Ուսումնասիրվել են ներդրումային ծրագրեր իրականացնող ընկերությունների 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքները եւ 3 վերլուծական տեղեկանքներ տեղադրվել են հանձնաժողովի կայքում:

Նոր որակական անցում է կատարվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության եւ համաձայնեցման գործընթացում: Սկսած 2004 թվականի երկրորդ կիսամյակից, հանձնաժողովն ստեղծում է սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվական բազաներ, որոնք 2005 թվականից յուրաքանչյուր եռամսյակ հրապարակվում են հանձնաժողովի վեբ կայքում: Այս աշխատանքների իրականացման նպատակը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողների սպասարկման որակի բազիսային ցուցանիշների սահմանումը եւ ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերը այդ ցուցանիշների բարելավմանն ուղղելն է: Հանձնաժողովը 2006 թվականին սահմանել է սպառողների հոսանքազրկումների քանակի եւ տևողության, թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի եւ տևողության բազիսային ցուցանիշները: 2007 թվականից ընկերության ներդրումային ծրագրերի համաձայնեցման ընթացքում կսահմանվեն այդ ցուցանիշների ծրագրային մեծությունները:

2006 թվականին հանձնաժողովը շարունակել է կարգավորվող ընկերությունների կողմից կատարված գնումների գործընթացների ուսումնասիրությունը: Ուսումնասիրվել եւ վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի և «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված գնումների եռամսյակային տեղեկատվությունները, համալրվել են տեղեկատվական բազաները և 5 վերլուծական տեղեկանքներ տեղադրվել են հանձնաժողովի կայքում:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից վարվող քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական արդյունքներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման

կայուն տեմպերի մասին: 2006 թվականի փարեվերջի դրությամբ հանրապետությունում գործում են 52 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 51-ը գտնվում են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 64 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով արտադրում են շուրջ 230 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը 2010 թվականին կկազմի շուրջ 120 ՄՎտ եւ ակնկալվում է, որ դրանք գործարկումից հետո տարեկան միջին հաշվով կարտադրեն եւս 460 մլն կՎտժ լրացուցիչ էլեկտրաէներգիա:

Բնագավառում առկա խնդիրները լուսաբանելու նպատակով հանձնաժողովը Հայաստանի վերականգնվող էներգետիկայի, էներգախնայողության հիմնադրամի եւ «PA Consulting Group» խորհրդատվական կազմակերպության հետ համատեղ, բանկերի, վարկային կազմակերպությունների եւ ներդրողների մասնակցությամբ կազմակերպել է խորհրդակցություն եւ հրապարակել «Զարգացման միտումները ՀՀ փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում» թեմայով տեղեկատվական զեկույց:

2007 թվականին հանձնաժողովը կձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը այս բնագավառի զարգացման տեմպերը պահպանելու եւ նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ:

## *7. Հեռահաղորդակցության բնագավառ*

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի համաձայն, 2006 թվականի հունվարի 1-ից էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում կարգավորման գործառույթներն իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

Ստանձնելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները, հանձնաժողովը 2006 թվականին մեծածավալ աշխատանքներ է տարել էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման գործընթացի համար անհրաժեշտ առաջնահերթ իրավական ակտերի մշակման ուղղությամբ:

Նպատակ ունենալով ապահովել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնող անձանց շահերի արդյունավետ պաշտպանությունը, հանձնաժողովը 2006 թվականին համապատասխան որոշմամբ հաստատել է «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում վեճերի լուծման կարգը», որով սահմանվել են լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց միջեւ ծագած վեճերի առիթով հանձնաժողով դիմելու, հանձնաժողովի կողմից վեճերը քննարկելու եւ լուծելու ընթացակարգերը:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող անձանց եւ ծառայություններից օգտվող բաժանորդների շահերի պաշտպանությունն ու մրցակցային ծառայությունների ոլորտում անառողջ մրցակցությունը բացառելու նպատակով

հանձնաժողովը որոշմամբ ամրագրել է, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից 2006 թվականի հունվար-ապրիլ ամիսներին իր բջջային պայմանագրային համակարգի բաժանորդ հանդիսացողների կողմից դեպի իր բջջային և ֆիքսված ցանցեր կատարվող զանգերի համար նվազեցված սակագնի կիրառումը ներառում է հակամրցակցային գործելակերպի հատկանիշներ, ընդ որում, այդ սակագինը կիրառվել է թիվ 60 լիցենզիայով սահմանված ընթացակարգի խախտմամբ:

Ռադիոհաճախականությունների փիրույթի արդյունավետ և նպատակային օգտագործումն ապահովելու նպատակով հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը», որի համաձայն տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման 22 թույլտվություն:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի արդյունավետ կարգավորումն ապահովելու համար 2006 թվականին հաստատվել է «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը», որով սահմանվել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեության տեսակների իրականացման համար լիցենզիայի տրամադրման ընթացակարգերը:

2006 թվականի ընթացքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների նկատմամբ դրսևորած խտրական վերաբերմունքի մասին ԶԼՄ-ներում եղած հաղորդագրությունների եւ հասարակական կազմակերպությունների կողմից նույն խնդրի կապակցությամբ բարձրացված հարցերի կարգավորման նպատակով հանձնաժողովի կատարած աշխա-տանքների արդյունքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ն չեղյալ է համարել ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվելու ժամանակ մոլորությամբ միջազգային զանգ կատարած բաժանորդների անվամբ հաշվարկված գումարները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման խթանման եւ հեռահաղորդակցության բնագավառում գործող այլ ընկերություններին եւս որոշակի ծառայություններ մատուցելու հնարավորություն տալու նպատակով, հանձնաժողովը, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համա-ձայնությամբ, 2006 թվականի ապրիլին հաստատել է տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցողի արբանյակային կապի երկրային կայանի միջոցով ինտերնետի ափլինք արբանյակային հասանելիության գնագոյացման բանաձեւը: Նշված բանաձեւի հաստատման արդյունքում «ԱրմենՏել» ՓԲԸ-ն նվազեցրել է (միջինը 15-20%-ով) իր կողմից մատուցվող միջազգային տարանցիկ (ինտերնետ) ծառայությունների սակագները:

Հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են փաստեր այն մասին, որ որոշ ՍՊԸ-ներ տեխնիկական միջոցների ու ծառայությունների օգտագործման միջոցով «ԱրմենՏել» կամ «Վ-Տելեկոմ» ՓԲԸ-ների պայմանագրային փաթեթներով միջազգային մուտքային տրաֆիկ են ներմուծում բջջային օպերատորների

ցանցեր՝ զրկելով հիմնական օպերատորներին միջազգային ծառայություններից ստանալու իրենց հաշվառված եւ հարկման ենթակա եկամուտները: Հանձնաժողովի 2006 թվականի ապրիլ ամսի համապատասխան որոշումներով այդ ընկերությունների գործունեությունը համարվել է անօրինական եւ տրվել գործունեության դադարեցման կարգադրություններ:

2006 թվականին հանձնաժողովը վարչական վարույթ էր հարուցել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի եւ այն անձանց միջև առաջացած վեճի կապակցությամբ, որոնք, ընկերության կարծիքով, հանրային ինտերնետի միջոցով մատուցում էին ձայնային ծառայություններ, խախտելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքը: Հեռախոսային ծառայություններից զրկված անձանց փաստարկների ուսումնասիրության հիման վրա կայացված հանձնաժողովի որոշմամբ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, մինչեւ հարուցված վարչական վարույթի արդյունքների հիման վրա հանձնաժողովի կողմից որոշում ընդունելը, վերսկսել է վերոհիշյալ անձանց հեռախոսային ծառայությունների մատուցումը:

Իրականացնելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ին վերապահված բացառիկ իրավունքները աստիճանաբար վերացնելու գործընթացը, հանձնաժողովը 2006 թվականի դեկտեմբերին փոփոխություն է կատարել թիվ 60 լիցենզիայում՝ վերացնելով միջազգային հասանելիության ծառայություն տվյալների փոխանցման-հաղորդման եւ տեղեկատվական ծառայությունների մատուցման «ԱրմենՏել» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքը եւ GSM երկրորդ օպերատոր «Կ-Տելեկոմ» ՓԲԸ-ին իրավունք վերապահելով միջազգային ձայնային կապի ծառայություններ մատուցել իր բաժանորդներին:

2006 թվականին հանձնաժողովի կողմից մշակվել եւ հաստատվել են կանոններ, որոնցով սահմանվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերով հեռախոսային (ձայնային) ծառայություններ մատուցող օպերատորների կողմից հանրությանը տեղեկատվական ծառայության ապահովման եւ այդ ցանցերի բաժանորդների տեղեկատուների հրապարակման պայմանները: Դրանցում հստակ շարադրված են տեղեկատուների կազմման եւ հրապարակման հետ կապված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորների պարտավորությունները, ինչպես նաև տեղեկատուներում ընդգրկվող տեղեկատվության ձևաչափը:

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման եւ ցանցի ոլորտում մրցակցության որեւէ աղավաղում բացառելու, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի արդյունավետ կարգավորումն ապահովելու նպատակով, հանձնաժողովը, 2006 թվականի սեպտեմբերին համապատասխան որոշմամբ կանոնակարգել է տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման նպատակով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փիրապետմանն ու շահագործմանն առնչվող հարցերը: Ընդ որում, տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց լիցենզիաները «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցվում են պարզեցված կարգով:

## *8. Աշխատանքը սպառողների հետ*

2006 թվականին շարունակվել են սպառողների հետ տարվող ամենօրյա աշխատանք-ները: Տարվա ընթացքում սպառողներից ստացվել են 944 հարցադրումներ եւ բողոքներ, որոնցից 152-ը՝ գրավոր, 792-ը՝ հրատապ հեռախոսով եւ սպառողների ընդունելության ընթացքում:

Հարցադրումներից և բողոքներից 570-ը ստացել են դրական լուծում, 48 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 326-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ:

«Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ մշակվել է հանձնաժողովի կողմից կարգավորվող ոլորտների սպառողների իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ ուղեցույց, որը կազմակերպության միջոցներով տպագրվել եւ անհատույց տրամադրվել է սպառողներին:

Վերը նշված հասարակական կազմակերպության հետ համատեղ հանձնաժողովի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչները մասնակցել են հայկական երկրորդ հեռուստաալիքով կազմակերպված «Թեժ գծին»՝ ներկայացնելով անմիջականորեն սպառող-ներին առնչվող իրավական ակտերը, դրանցում տեղ գտած փոփոխությունները, պատասխանել են սպառողների հեռախոսազանգերին:

Ինչպես նախորդ տարիներին, սպառողների բողոքները տեղում ուսումնասիրելու նպատակով, շահագրգիռ կողմերի հետ համատեղ իրականացվել են մի շարք ստուգայցեր եւ ձեռնարկվել համապատասխան միջոցներ բարձրացված հարցերը կարգավորելու ուղղութ-յամբ:

## *9. Գործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ*

Հանձնաժողովը, նպատակ ունենալով ապահովել իր գործունեության թափանցիկությունը եւ հրապարակայնությունը, 2006 թվականի ընթացքում զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար հանդես է եկել հանրային ծառայությունների ոլորտներում տեղի ունեցող իրադարձությունների եւ սպառողներին հուզող հարցերի առնչությամբ:

Լրատվական գործակալությունների, հեռուստաընկերությունների, ինչպես նաեւ տպագիր մամուլի միջոցով, հանձնաժողովը հետեւողաբար ծանուցումներ եւ հաղորդա-գրություններ է ներկայացրել հանձնաժողովի նիստերի եւ հասարակական լսումների մասին, որտեղ քննարկվել են սպառողների շահերին առնչվող խնդիրներ: Կարեւորելով սպառողների իրավունքների իրազեկման մակարդակի բարձրացումը, հանձնաժողովի համապատասխան մասնագետներ տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար հանդես են եկել ելույթներով, պարզաբանումներով, հասարակական հնչողություն ունեցող խնդիրների եւ դրանց առնչվող

որոշումների վերաբերյալ տվել հարցազրույցներ, մասնակցել հեռուստատեսությամբ կազմակերպված բաց քննարկումներին, բանավեճերին:

Հաշվետու տարվա ընթացքում հիմնովին փոփոխվել եւ գործողության մեջ է դրվել հանձնաժողովի ինտերնետային կայքը, որի ժամանակակից ծրագրային ապահովումը թույլ է տալիս կայքի այցելուին արագ գտնել հետաքրքրող անհրաժեշտ տեղեկատվությունը, տեղեկանալ հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա եւ ժամի, նիստերի օրակարգերի, քննարկվող հարցերի, կազմակերպվող քննարկումների, լսումների եւ հանձնաժողովի ընդունած որոշումների մասին: Կայքում գործող «Թեժ գիծը» հնարավորություն է տալիս սպառողներին պարզաբանումներ եւ բացատրություններ տալ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:

2006 թվականի ընթացքում հանրային ծառայությունների ոլորտներին վերաբերող՝ լրատվամիջոցների ահազանգերին տրվել են պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են համատեղ քննարկումներ՝ սպառողների, մատակարարների կամ ծառայություններ մատուցող ընկերությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

### *10. Գործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ*

Հանձնաժողովն իր առաջնահերթ խնդիրներից մեկն է համարում աշխատակազմի ուսուցման ու վերապատրաստման, միջազգային փորձի ուսումնասիրության եւ ներդրման, փորձի փոխանակման աշխատանքների կազմակերպումը:

Հատկապես հեռահաղորդակցության կարգավորման հարցերով հանձնաժողովը սերտորեն համագործակցում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) առեւտրային իրավունքի եւ տնտեսական կարգավորման ծրագրի շրջանակներում գործող «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության հետ: Հանձնաժողովի մասնագետների որակավորումն այդ ոլորտում բարձրացնելու նպատակով Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Բերինգ Փոյնթ» ընկերության, Միջազգային հեռահաղորդակցության ընկերակցության կողմից կազմակերպվել են տարբեր թեմաներով մի շարք սեմինարներ, մասնավորապես՝

- Առեւտրի համաշխարհային կազմակերպության նկատմամբ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը հեռահաղորդակցության եւ տեղեկատվության ոլորտում,
- Շարժական կապի լիցենզավորման մեթոդաբանություններ,
- Հեռահաղորդակցության ոլորտում կարգավորողի կողմից վեճերի լուծում,
- Համընդհանուր ծառայություններ եւ համընդհանուր հասանելիություն,
- Սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- Հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման

հեռանկարներ:

Հանձնաժողովը ներգրավված է Հայաստանի եւ Եվրամիության միջեւ գործընկերության եւ համագործակցության իրականացման ազգային ծրագրի մշակման շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Եվրամիության օրենքների համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներում:

2006 թվականին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եւ Կրթությամբ զարգացման ակադեմիայի (AED) աջակցությամբ ու ֆինանսավորմամբ իրականացվել է հանձնաժողովի մասնագետների հերթական այցը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների հանձնաժողով` ուսումնասիրելու կարգավորման բնագավառում այդ կառույցի բազմամյա փորձը:

Հանձնաժողովը, իրեն վերապահված իրավասությունների եւ պարտականությունների շրջանակների ընդլայնմամբ պայմանավորված, անհրաժեշտ է համարում միջազգային փորձի ուսումնասիրումը, եւ այդ առումով 2006 թվականին իրականացրել է աշխատակազմի մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացներ, ինչպես նաեւ սերտորեն համագործակցել միջազգային կազմակերպությունների եւ այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

2006 թվականին հանձնաժողովի մասնագետները մասնակցել են`

- էներգետիկայի կարգավորող հանձնաժողովերի տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին եւ նիստերին,
- Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության աջակցությամբ հանձնաժողովի աշխատակազմի համար նախատեսված` հեռահաղորդակցության ոլորտին վերաբերող հիմնահարցերի վերաբերյալ մի շարք ուսուցողական միջոցառումների, ինչպես նաեւ ոլորտի համաժողովներին եւ այլ հանդիպումների,
- ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ արդեն իսկ ավանդույթ դարձած փորձի փոխանակման հերթական հանդիպումներին,
- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եւ Կրթությամբ զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպված սեմինարներին:

## *ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը*

Ստորև ներկայացվում են հանձնաժողովի 2006 թվականի հաստատված եւ ճշգրտված բյուջեի ֆինանսավորման և փաստացի ծախսերի տվյալները.

| N | Ծախսի անվանումը | Հաստատված բյուջե /հազ.դրամ/ | Տարեկան ճշտված բյուջե /հազ.դրամ/ | Ֆինանսավորում /հազ.դրամ/ | Փաստացի ծախս /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը ծախսեր** | **352263.6** | **352263.6** | **344578.0** | **345405.3** |
| **1.** | **Աշխատավարձ եւ աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ** | **270972.0** | **270972.0** | **270972.0** | **270972.0** |
| **2.** | **Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ** | **28500.6** | **28500.6** | **28500.6** | **28471.2** |
| **3.** | **Գրասենյակային ապրանքներ եւ նյութեր** | **7058.5** | **6108.5** | **3180.9** | **3124.5** |
| **4.** | **Գույք եւ սարքավորումներ** | **250.0** | **250.0** | **154.3** | **154.3** |
| **5.** | **Գործուղումներ, ծառայողական ուղեւորություններ** | **8364.1** | **8364.1** | **6724.7** | **7062.0** |
| **6.** | **Տրանսպորտի պահպանման ծախսեր** | **5644.2** | **6594.2** | **6593.5** | **6593.5** |
| **7.** | **Կապի ծառայությունների վճար** | **5828.7** | **5828.7** | **5828.5** | **5823.2** |
| **8.** | **Վառելիքի եւ ջեռուցման ծախսեր** | **1100.0** | **1100.0** | **502.8** | **793.9** |
| **9.** | **Էլեկտրաէներգիայի ծախսեր** | **4240.0** | **4240.0** | **3961.7** | **4203.2** |
| **10.** | **Ջրմուղ կոյուղուց օգտվելու վարձ** | **180.0** | **180.0** | **72.8** | **159.7** |
| **11.** | **Այլ կոմունալ ծախսեր** | **100.0** | **100.0** | **-** | **-** |
| **12.** | **Հարկեր, տուրքեր եւ այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր** | **100.0** | **100.0** | **54.0** | **54.0** |
| **13.** | **Ներկայացուցչական ծախսեր** | **849.5** | **849.5** | **466.3** | **466.3** |
| **14.** | **Այլ ծառայությունների ձեռք-բերման ծախսեր** | **3426.0** | **3426.0** | **2375.7** | **2337.3** |
| **15.** | **Սարքեր, սարքավորումների ձեռքբերում** | **4100.0** | **4100.0** | **3992.2** | **3992.2** |
| **16.** | **Տրանսպորտային միջոցների ձեռքբերում** | **11000.0** | **11000.0** | **11000.0** | **11000.0** |
| **17.** | **Ակտիվների ձեռքբերում** | **550.0** | **550.0** | **198.0** | **198.0** |